



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՐԴ

ք. Երևան

23.11.2016թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-21/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.02.2016թ. թիվ 1/73-1/5285-16 գրությամբ ներկայացված Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանին (ՀՎՀՀ՝ 85141952) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-21/16 բողոք), ՀՀ ֆինանսների նախարարության 22.12.2015թ. թիվ 1/73-1/41370-15, 12.03.2016թ. թիվ 1/73-3/9214-16, 15.04.2016թ. թիվ 1/73-3/12147-16 և 02.05.2016թ. թիվ 1/73-3/13305-16 գրությունները և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, Ա/Ձ-ի 16.05.2016թ. ներկայացրած գրությունները, ՀՀ ԿԱ պետական կոմիտեի 09.11.2016թ. թիվ 1/6-1/34300-16 և 13.10.2016թ. 1/6-1/30936-16 գրությունները, ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-21/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 21.11.2016թ. ներկայացրած եզրակացությունը պարզեց.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն), ՀՀ պաշտպանության նախարարության 07.12.2015թ. թիվ ԴՎԱ/2928, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 09.03.2016թ. թիվ 5/08/5132-16, «Հրազդանի

«Ժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 15.03.2016թ թիվ 244 և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և երիտասարդական ԾԻԳ» ՊՀ-ի 16.03.2016թ. թիվ 1/60 գրությունների հիման վրա, համապատասխանաբար 22.12.2015թ. թիվ 1/73-1/41370-15, 12.03.2016թ. թիվ 1/73-3/9214-16, 15.04.2016թ. թիվ 1/73-3/12147-16 և 02.05.2016թ. թիվ 1/73-3/13305-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանին (այսուհետ նաև՝ Ա/Ձ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար: Վերոհիշյալ գրություններով ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել Պատվիրատուների վերը նշված գրությունները՝ կից ներկայացված փաստաթղթերի պատճեններով:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.02.2016թ. թիվ 1/73-1/5285-16 գրությամբ պահանջել է նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանին ներառելու նպատակով բողոքարկման գործընթաց:

2. Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, կարծիք ստանալու նպատակով, 25.12.2015թ. թիվ 01/04.1/3881-15, 15.03.2016թ. թիվ 01/04.1/966-16, 22.04.2016թ. 01/04.2/1632-16 և 03.05.2016թ. թիվ 01/04.1/1739-16 գրություններով դիմել է Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանին:

Ա/Ձ-ն, ի պատասխան Կենտրոնի 25.12.2015թ. թիվ 01/04.1/3881-15 գրության, 16.05.2016թ. գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից լվացքի և մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել: Ընթացակարգի արդյունքում պարզվել է, որ Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից, սակայն տեխնիկական սխալի հետևանքով, հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը նույնականացվել է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք

տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացված պայմանագրերի հանրագումարի հետ, համախառն եկամտի հանրագումարի մեջ ներառվել է նաև հայտը ներկայացնելու տարվա համախառն եկամուտը, որը չպետք է ներառվեր: Նշված սխալի արդյունքում ի հայտ է եկել անհամապատասխանությունը:

Ա/Ձ-ն նշել է նաև, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկով ներկայացրած առանձին չափաբաժիններից առնվազն երկուսից:

Ա/Ձ-ն, ի պատասխան Կենտրոնի 15.03.2016թ. թիվ 01/04.1/966-16, 22.04.2016թ. 01/04.2/1632-16 և 03.05.2016թ. թիվ 01/04.1/1739-16 գրությունների, համապատասխանաբար 16.05.2016թ. ներկայացրած գրություններով հայտնել է, որ տեղի է ունեցել հաշվապահական սխալ, քանի որ Ընթացակարգերին մասնակցելու նպատակով հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ Ա/Ձ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

3. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը 17.08.2015թ. թիվ ԴՎԱ/1956 և 15.03.2016թ. թիվ ԴՎԱ/606 գրություններով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել, որ «ԲԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ն «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/55» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/2» ծածկագրով ընթացակարգերին մասնակցելու նպատակով հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ:

Պատվիրատուն վերը նշված գրություններին կից միաժամանակ Նախարարությանն է ներկայացրել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

4. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու 2) 09.03.2016թ. թիվ 5/08/5132-16 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել, որ վերջինիս կողմից տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՍՊ-ՇՀԱՊՁԲ-15/11» ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (**այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2**), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանը:

Պատվիրատու 2-ը հայտնել է, որ համաձայն Նախարարության կողմից տրամադրված եզրակացության, Ա/Ձ-ն **2016թ. փետրվարի 25-ի** դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն **1001 ՀՀ դրամի չափով**:

5. ՀՀ Կոտայքի մարզի «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ նաև Պատվիրատու 3) 15.03.2016թ թիվ 244 գրությամբ դիմել Նախարարությանը՝ հայտնելով, որ վերջինիս կողմից կազմակերպվել է «ՀԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/007-Ա» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (**այսուհետ նաև՝ Ընթացակարգ 3**), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին հարցում է կատարվել ՀՀ ֆինանսների նախարարություն, ի պատասխան որի՝ Նախարարության կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանը **2016թ. փետրվարի 25-ի** դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն **1001 ՀՀ դրամի չափով**:

6. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և երիտասարդական ԾԻԳ» ՊՀ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և երիտասարդական ԾԻԳ» ՊՀ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու 4) 16.03.2016թ. թիվ 1/60 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել, որ վերջինիս կողմից կազմակերպվել է «ՍԵԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-15/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (**այսուհետ՝ Ընթացակարգ 4**), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանը:

Համաձայն Նախարարության կողմից Պատվիրատու 4-ին տրամադրված եզրակացության՝ Ա/Ձ-ն **2016թ. փետրվարի 24-ի** դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն:

7. ՍՑ-ԳԲԽ-21/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը խորհրդին է ներկայացրել իր 21.11.2016թ. եզրակացությունը և առաջարկել է ՀՀ ֆինանսների նախարարության 15.02.2016թ. թիվ 1/73-1/5285-16 գրությամբ ներկայացված Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանին (ՀՎՀՀ՝ 85141952) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված 6 ամիս ժամկետով:

8. ՍՑ-ԳԲԽ-21/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 15.02.2016թ. թիվ 1/73-1/5285-16 գրությամբ ներկայացված Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

- Ընթացակարգ 1-ին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանը:

- Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանը ներկայացրած հայտի N 4 հավելվածով՝ գնային առաջարկով հայտնել և հավաստել է, որ ուսումնասիրելով Ընթացակարգ 1-ի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը՝ առաջարկում է պայմանագիրը կատարելու համար հետևյալ գները:

1-ին չափաբաժնով սահմանված «Երևանի կայազոր-1-ի փարածքում ներառված զորամասերի լվացքի ծառայության համար՝ 65929266 ՀՀ դրամ,

2-րդ չափաբաժնով սահմանված «Երևանի կայազոր-2-ի փարածքում ներառված զորամասերի լվացքի ծառայության համար՝ 60884244,2 ՀՀ դրամ,

3-րդ չափաբաժնով սահմանված «Արմավիրի կայազորի փարածքում ներառված զորամասերի լվացքի ծառայության համար՝ 25695722,2 ՀՀ դրամ,

4-րդ չափաբաժնով սահմանված «Լոռու կայազորի փարածքում ներառված զորամասերի լվացքի ծառայության համար՝ 136429193,6 ՀՀ դրամ,

5-րդ չափաբաժնով սահմանված «Եղեգնաձորի կայազորի փարածքում ներառված զորամասերի լվացքի ծառայության համար՝ 29370033 ՀՀ դրամ:

• /Ձ Ռուզաննա Հովհաննիսյանը 14.10.2015թ. ներկայացրած հայտի N 3.3 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

• Պատվիրատու 1-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանի վերաբերյալ:

• Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 1-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է **7853395 ՀՀ դրամ**:

• Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովի կողմից 30.10.2015թ. ժամը 09:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով որոշում է կայացվել մերժել Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանի հայտը՝ վերջինիս կողմից հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ներկայացված գնային առաջարկից պակաս լինելու հիմքով:

• Ի պատասխան Կենտրոնի 21.10.2016թ. թիվ 01/04.1/3862-16 գրության, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, հիմք ընդունելով Նոր Նորքի ՀՏ-ի 27.10.2016թ. գրությունը, 09.11.2016թ. թիվ 1/6-1/34300-16 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանի հայտը ներկայացվելուն (2015թ.) նախորդող (2012թ., 2013թ., 2014թ.) երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը **կազմում է 7853395 ՀՀ դրամ**:

2. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից կազմակերպվել է «ՍՊ-ՇՀԱՊՁԲ-15/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

• Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանը:

• Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (25.02.2016թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

• Պատվիրատու 2-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 29.02.2016թ. կատարված հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանի վերաբերյալ:

• Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 2-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ Ա/Ձ-ն **2016թ. փետրվարի 25-ի** դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն **1001 ՀՀ դրամի չափով:**

• Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի 04.03.2016թ. ժամը 11:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետով որոշում է կայացվել մերժել Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանի հայտը՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմքով:

3. «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ՀԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/007-Ա» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

• «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ՀԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/007-Ա» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանը:

- Պատվիրատու 3-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին կատարված հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանի վերաբերյալ:

- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ Նախարարության կողմից Պատվիրատու 3-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ Ա/Ձ-ն **2016թ. փետրվարի 25-ի** դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն **1001 ՀՀ դրամի** չափով:

- Ընթացակարգ 3-ի գնահատող հանձնաժողովի կողմից 12.03.2016թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.3 կետով որոշվել է մերժել Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանի հայտը՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմքով:

4. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և երիտասարդական ԾԻԳ» ՊՀ-ի կողմից կազմակերպվել է «ՍԵԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-15/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

- Ընթացակարգ 4-ին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանը:

- Պատվիրատու 4-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 01.03.2016թ. կատարված հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանի վերաբերյալ:

- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ Նախարարության կողմից Պատվիրատու 4-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ Ա/Ձ-ն **2016թ. փետրվարի 24-ի** դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն **999 ՀՀ դրամի** չափով:

- Ընթացակարգ 4-ի գնահատող հանձնաժողովի կողմից 12.03.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 2.2 կետով որոշվել է Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանի հայտը մերժել՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմքով:

5. Ա/Ձ-ն 16.05.2016թ. Կենտրոնին ներկայացրած գրություններով հայտնել է, որ տեղի է ունեցել հաշվապահական սխալ, քանի որ «ՍՊ-ՇՀԱՊՁԲ-15/11», «ՀԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/007-Ա» և «ՍԵԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-15/11» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով

գնում կատարելու ընթացակարգերին մասնակցելու նպատակով հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ, վերջինս չի ունեցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ:

6. Կենտրոնը 19.09.2016թ. թիվ 01/04.1/3492-16 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ խնդրելով հայտնել, Ա/Ձ-ն հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ՝ **24.02.2016թ. և 25.02.2016թ.**, ունեցե՞լ է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ **ժամկետանց հարկային պարտավորություններ**, թե ոչ:

7. Ի պատասխան Կենտրոնի վերը նշված գրության ՀՀ ԿԱ պետական կոմիտեն, հիմք ընդունելով Նոր Նորքի ՀՏ-ի 30.09.2016թ. գրությամբ տրամադրած տեղեկատվությունը, 13.10.2016թ. 1/6-1/30936-16 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանը **24.02.2016թ. և 25.02.2016թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ:**

8. Նախարարությունը 15.07.2016թ. թիվ 1/73-3/18478-16 և 29.07.2016թ. թիվ 1/73-3/19404-16 գրություններով դիմել է Կենտրոնին՝ հայտնելով, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և ՀՀ ոստիկանության զորքերի կողմից կազմակերպված ընթացակարգերին մասնակցելու նպատակով Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանը համապատասխանաբար 14.12.2015թ. և 01.06.2016թ., 16.06.2016թ. հայտեր է ներկայացրել:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով ՍՑ-ԳԲԽ-21/16 բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է բավարարման հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ **գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

Նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում **ներկայացրել է կեղծ տվյալ:**

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ եթե Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցմանն ի պատասխան տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ

իր կողմից **հայտը ներկայացվելուն նախորդող՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:**

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ **6 ամիս ժամկետով**, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:

Ընկերությունը հայտերի N 2 հավելվածներով՝ Ընթացակարգ 2-ին, 3-ին և 4-ին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարություններով, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրերի դրությամբ (24.02.2016թ., 25.02.2016թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Ի պատասխան ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության, «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և երիտասարդական ԾԻԳ» ՊՀ-ի կողմից կատարված հարցումների՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել են եզրակացություններ, համաձայն որոնց՝ Ա/Ձ-ն **հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ (25.02.2016թ., 24.02.2016թ.)** ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց

հարկային պարտավորություններ՝ համապատասխանաբար 1001 ՀՀ դրամի և 999 ՀՀ դրամի չափով:

Համաձայն՝ ՀՀ ԿԱ պետական կոմիտեի 13.10.2016թ. թիվ 1/6-1/30936-16 գրության՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանը **24.02.2016թ. և 25.02.2016թ.** դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական կոմիտեի 13.10.2016թ. թիվ 1/6-1/30936-16 գրությունը, համաձայն որի՝ Ա/Ձ-ն **24.02.2016թ. և 25.02.2016թ. (հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ)** չունի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, Կենտրոնը գտնում է, որ Ա/Ձ-ի կողմից 24.02.2016թ. և 25.02.2016թ. հայտերի N 2 հավելվածներով ներկայացված հայտարարությունները չեն հանդիսանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Միևնույն ժամանակ, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից լվացքի և մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԾԶԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾԶԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանը 14.10.2015թ. ներկայացրած հայտի N 3.3 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից, մինչդեռ Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը, համաձայն ՀՀ ՖՆ կողմից տրամադրված եզրակացության՝ կազմում է 7853395 (յոթ միլիոն ութ հարյուր հիսուներեք հազար երեք հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ: Նշված հանգամանքը հավաստվել է նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 09.11.2016թ. թիվ 1/6-1/34300-16 գրությամբ, ըստ որի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանի հայտը ներկայացվելուն (2015թ.) նախորդող (2012թ., 2013թ., 2014թ.) երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է **7853395 ՀՀ դրամ:** Ա/Ձ-ի հայտի N 4 հավելվածով՝ առավելագույն գնային առաջարկը կազմել է 136429193,6 (հարյուր երեսունվեց միլիոն չորս հարյուր քսանինը հազար հարյուր իննսուներեք ամբողջ վեց տասնորդական) ՀՀ դրամ: Հետևաբար, Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանի կողմից

14.10.2015թ. ներկայացրած հայտի հավելված N 3.3 հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:**

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն են՝**

- նույն կետի «բ» ենթակետով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,

- խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և **Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ**, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Այսպիսով՝ Խորհուրդն արձանագրում է, որ Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ա/Ձ-ն **14.10.2015թ.** մասնակցելով Ընթացակարգ 1-ին, ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում և **կրկին հայտեր է ներկայացրել** ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 14.12.2015թ. կազմակերպված «ՀԾԿ-16/2-ՇՀԱՊՁԲ-15/11» և 01.06.2016թ. կազմակերպված «ՀԾԿ-16/4-ՇՀԱՊՁԲ-15/11» և «ՀԾԿ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/11», ՀՀ ոստիկանության գործերի կողմից 16.06.2016թ. կազմակերպված «ՀՀ ԿԱ ՈՁ ՇՀԱՊՁԲ-16/11/ԿԾԾ/2»

ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերին մասնակցելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից խախտվել են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, այն է՝ հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում Ընկերությունը ներկայացրել է կեղծ տվյալ, ուստի վերագրյալը հիմք է Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերագրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց


ՀՀ ֆինանսների նախարարության 15.02.2016թ. թիվ 1/73-1/5285-16 գրությամբ ներկայացված Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյանին (ՀՎՀՀ՝ 85141952) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված 6 ամիս ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝



Գևորգ Հայրապետյան

Անդամ՝



Արամ Գրիգորյան